ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<14>> դեկտեմբերի 2012թ. N 56-Ա

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության *քաղաքացիների ընդունելության առաջարկությունների, դիմումների և բողոքների* քննարկման բաժնի 2012 թվականի նոյեմբերի 29-ի հ.20-13154 գրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ուղարկված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի N 7 շենքի N 4 բնակարանի բնակիչ Էլմիրա Գևորգյանի Հայաստանի Հանրապետության Նախագահին ուղղված դիմումը և Արմավիրի մարզի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի *եզրակացությունը*

որոշում եմ՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի* տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Էլմիրա Գևորգյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ